



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«27» 07 2022թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0108-22

**Ձեռնարկողը՝**

**«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ**

Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, 6/1, թիվ 1 ձեռնարկություն

**Գործունեությունը՝ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի  
արդյունահանման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվեքվություն**  
ՀՀ, Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**  
 թիվ ԲՓ 0108-22

<27> 07 2022թ.

**Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման  
 շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
 նախնական գնահատման հայտ  
 /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Մեղրաձոր բնակավայր

**Ներածական մաս.** Մեղրաձորի ոսկու հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են Մեղրաձոր, Փյունիկ, Արտավազը, Մարմարիկ և Աղավնաձոր գյուղերը, որոնք գտնվում են հանքավայրից 0.5-7.0կմ հեռավորության վրա: Տարածքը գտնվում է 1800 – 2500մ բացարձակ բարձրությունների վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի բ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Տվյալ նախագծի նպատակն է երկարաձգել հանքարդյունահանման թույլտվության ժամկետը, որը լրանում է 2023թ. սեպտեմբերին: Մեղրաձորի ոսկու հանքավայրի հանքաքարի արդյունաբերական պաշարները հիմնականում գտնվում են Մարմարիկ գետի ձախ ափին, Կենտրոնական, Հյուսիսային և Աջարիձոր տեղամասերում:

Մեղրաձորի ոսկու հանքավայրը շահագործվում է 1985 թվականից, «Հայգունմետնախագիծ» ԳՀԻ-ի կողմից կազմված աշխատանքային նախագծի հիման վրա: Նախագիծը կազմվել է նախկին ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների հիման վրա: 2016թ.-ին կատարվել է հանքավայրի արմատական վերագնահատում հանքաքարի պաշարների հաշվարկումով: Հանքավայրի պաշարները, հաստատված ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից (07.04.2016թ.):

|   |           |      |  |
|---|-----------|------|--|
| < | Պաշարների | Չափի |  |
|---|-----------|------|--|





| /h                                             | ցուցանիշները | միավորը | Հաշվեկշռային պաշարներ |         |
|------------------------------------------------|--------------|---------|-----------------------|---------|
|                                                |              |         | C1 կարգ               | C2 կարգ |
| 1                                              | 2            | 3       | 4                     | 5       |
| 1.                                             | Հանքաքար     | հազ. տ  | 353.97                | 295.03  |
| 2.                                             | Ոսկի         | կգ      | 2296.93               | 1776.73 |
| 3.                                             | Արծաթ        | տ       | 3.72                  | 3.16    |
| 4.                                             | Թելուր       | տ       | -                     | 17.43   |
| Օգտակար բաղադրիչների միջին պարունակությունները |              |         |                       |         |
| 5.                                             | Ոսկի         | գ/տ     | 6.49                  | 6.02    |
| 6.                                             | Արծաթ        | գ/տ     | 10.5                  | 10.7    |
| 7.                                             | Թելուր       | գ/տ     | -                     | 26.86   |

Մեղրաձորի ոսկու հանքավայրի հանքաքարի մնացորդային պաշարները (C1+C2 վերահաշվարկված) 2020թ. հունվարի 1-ի դրությամբ.

| Հ/<br>h                                        | Պաշարների<br>ցուցանիշները | Չափի<br>միավորը | Հաշվեկշռային պաշարներ |         |
|------------------------------------------------|---------------------------|-----------------|-----------------------|---------|
|                                                |                           |                 | C1 կարգ               | C2 կարգ |
| 1                                              | 2                         | 3               | 4                     | 5       |
| 1.                                             | Հանքաքար                  | հազ. տ          | 305.1                 | 293.4   |
| 2.                                             | Ոսկի                      | կգ              | 1948.7                | 1762.3  |
| 3.                                             | Արծաթ                     | տ               | 3.3                   | 3.1     |
| 4.                                             | Թելուր                    | տ               | -                     | 16.1    |
| Օգտակար բաղադրիչների միջին պարունակությունները |                           |                 |                       |         |
| 5.                                             | Ոսկի                      | գ/տ             | 6.4                   | 6.0     |
| 6.                                             | Արծաթ                     | գ/տ             | 10.8                  | 10.7    |
| 7.                                             | Թելուր                    | գ/տ             | -                     | 26.86   |

- Հանքաքարի հաշվեկշռային պաշարները 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում են՝ 598550տ., այդ թվում՝ C1 կարգի - 305130տ., C2 կարգի - 293420տ.:

- Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է ստորգետնյա լեռնային աշխատանքներով արդյունահանել հանքաքարի բոլոր արդյունաբերական պաշարները:

- Ստորգետնյա հանքի տարեկան հաշվարկային արտադրողականությունն ըստ ապրանքային հանքաքարի, ընդունված է 60 հազ.տ.:

- Հանքի ծառայման ժամկետը - 17.2 տարի է:

- Բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքներն անց են կացվելու հորատապայթեցման աշխատանքների կիրառմամբ:

- Ստորգետնյա հանքում հանքաքարի ընդհանուր կորուստները կազմելու են 4-6%, միջինը 5%, իսկ հանքաքարի որակի փոփոխությունը (աղքատացումը) - 40-50%, միջինը 45%:

- Հանքը օդափոխվելու է թարմ օդի ներծծման եղանակով: Որպես օդափոխման գլխավոր օդափոխիչ ընդունված է տեղում առկա BOD 21M մակնիշի առանցքային օդափոխիչ:





- Ջրահեռացումը տրանսպորտային հանքուղու հորիզոնից վերև ինհիբնահոս կերպով է կատարվելու, իսկ տրանսպորտային բովանցքի հորիզոնից ներքև՝ տեղափոխվող պոմպերի օգնությամբ:

- Նախագծով ստորգետնյա հանքում նախատեսվում են հանքային օդի փոշեզերծման համալիր միջոցառումներ:

- Նախատեսվում է ստորգետնյա հանքի հակահրդեհային պաշտպանություն, որն իր մեջ ներառում է փորվածքների կահավորումը հրդեհամարման առաջնային միջոցներով:

- Աշխատանքային տեղերը սեղմած օդով ապահովվելու համար նախագծված և տեղում, տրանսպորտային հանքուղու մուտքի մոտ, կառուցված է կոմպրեսորային կայան 4BM -10-100 մակնիշի, 100մ<sup>3</sup>/րոպե արտադրողականությամբ երկու կոմպրեսորների տեղադրմամբ:

- Ստորգետնյա հանքի արդյունաբերական հրապարակը ձևավորված է տրանսպորտային շտոլնյայի մուտքի շրջակայքում, նախկին նախագծերով:

- Նախատեսվում է ստորգետնյա հանքի արդյունաբերական սանիտարիա և լեռնային փորվածքների անվտանգ անցում անվտանգության միասնական և տեխնիկական շահագործման կանոններին խստիվ համապատասխան:

Հանքավայրի շինարարության և շահագործման համար անհրաժեշտ բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների անցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների կիրառմամբ: Ուղղաձիգ փորվածքներն անց են կացվելու, կամ անցումային КПБ-4А համալիրով, կամ սովորական եղանակով՝ տելեսկոպային ПТ-48, կամ համարժեք տեխնիկական բնութագրով այլ մակնիշի հորատամուրճերի օգնությամբ:

Հորիզոնական փորվածքների անցումը կարող է իրականացվել (Atlas Copco ֆիրմայի Boomer T1D հորատման մեքենայի կիրառմամբ: Հորատամուրճի 1.5-2մ/րոպե արտադրողականության դեպքում 1 հաստոցը կարող է լիովին բավարարել հանքի շինարարության և շահագործման ժամանակ անհրաժեշտ բոլոր հորիզոնական փորվածքների անցումը, համաձայն օրացուցային գրաֆիկի: Անհրաժեշտության դեպքում հորատման աշխատանքները կարող են կատարվել տեղում առկա УТ 28 և УТ 29А հորատամուրճերով:

Որպես ապարաբարձիչ տեղափոխող սարքավորում նախատեսված են Atlas Copco ֆիրմայի արտադրության TORO-151, ST-3.5 կամ չինական GPL-1 մակնիշի, շերտի 1-3մ<sup>3</sup> տարողությամբ, տեղում առկա բարձող տեղափոխող ինքնագնաց մեքենաները:

Անցումային աշխատանքներից առաջացած ապարները դեպի երկրի մակերևույթ տեղափոխման ժամանակ կիրառվում են նաև ստորգետնյա ավտոինքնաթափեր և նեղուղի էլեկտրագնացքներ:


Ստորգետնյա լեռնային փորվածքների անցման ժամանակ հանքախորշի օդափոխումը իրականացվում է տեղային օդափոխման օդափոխիչների կիրառմամբ (BMЭ-5, BMЭ-6 և այլն):

Մեղրաձորի ստորգետնյա հանքի լեռնակապիտալ աշխատանքների ծավալները որոշված են ելնելով հանքի բացման, մշակման, օդափոխության և հանքաքարի մինչև բեռնաթափման վերջնական կետ տեղափոխելու տեխնոլոգիական սխեմայից:

Հանքի տարեկան արտադրողականությունն անխափան ապահովվելու համար, համաձայն տեխնոլոգիական նախագծման նորմերի, պետք է ապահովվել՝

- հանույթի պատրաստ հանքաքարի պաշարներով նվազագույնը 4 ամիս,

- հանույթի նախապատրաստված հանքաքարի պաշարներով նվազագույնը 6 ամիս:





Սույն աշխատանքային նախագծով Մեղրաձորի ոսկու հանքավայրի հանքաքարի առերևույթ նախատեսվում է համակցված (կոմբինացված) եղանակով՝ ինքնագնաց բարձող տեղափոխող մեքենաներով, ավտոմեքենաներով և էլեկտրաքարշային գնացքով: Հանքախորշից պայթեցված հանքաքարը ՈՇ-10, կամ ՈՇ-17 քերաշերտիային կարապիկներով առերևույթ է դեպի բլուկի տրանսպորտային հորիզոն, որտեղից ինքնագնաց մեքենաներով բարձվում և տեղափոխվում է տրանսպորտային հանքուղիների մոտակա բարձման բեռնաթափման խույր: Այստեղ հանքաքարը բարձվում է 8տ բեռնատարողությամբ (օրինակ GPT-8) մակնիշի ավտոինքնաթափերի մեջ և տեղափոխվում համապատասխան տրանսպորտային հանքուղու բեռնաթափման բեռնաբարձման հանգույց: Այս հանգույցում հանքաքարը նույն ինքնագնաց մեքենաների օգնությամբ բարձվում է նեղուղի էլեկտրագնացքի 4մ<sup>3</sup> տարողությամբ ՄԵԵ 4 մակնիշի վագոնիկների մեջ և 10ԿՔ կամ 7ԿՔ մակնիշի էլեկտրաքարշերի օգնությամբ տեղափոխվում է դեպի երկրի մակերևույթ: Յուրաքանչյուր հանքային մարմնից օրական արդյունահանվում է 98.36տ ապրանքային հանքաքար:

Շահագործման ավարտից հետո իրականացվում է խախտված հողերի վերականգնում: Փակման ծրագրով կվերականգնվեն՝ բովանգքների լցակույտերի հարթակները, արտադրական հրապարակը, ավտոճանապարհները: Վերականգնվող ընդհանուր մակերեսը կկազմի 18.5հա:

Ըստ ներկայացված հաշվետվության, տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսերի տեսակներ չկան: Դաշտային ուսումնասիրությունների ժամանակ էնդեմիկ և Կարմիր գրքում գրանցված տեսակներ նույնպես չեն հայտնաբերվել: Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքը Արզական-Մեղրաձոր արգելավայրը ուղիղ գծով հանքից գտնվում 1,3 կմ հեռավորության վրա:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-պայթանցքերի հորատումը նախատեսվում է ջրի մատուցմամբ, որով նվազեցվում է փոշու արտանետումները,

-աշխատանքային տեղերի գոտիներում և օդափոխության թարմ շիթի ուղիներում, նախատեսվում է փորվածքների պատերի պարբերաբար լվացում փոշուց,

-պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապահովվում է ջրային մառախուղով ջրափոշեզերծումը, որով լցվում են փորվածքներն անմիջապես պայթեցումից առաջ:

-պայթեցումից առաջ կատարվելու է փորվածքի պայթեցնող տեղամասի նախնական ջրցանում փոշեզերծման նպատակով,

**Պատճառաբանական մաս.** Մեղրաձորի ոսկու հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել: Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից ստացված կարծիքի համաձայն՝ ընկերության





կողմից հայցվող տարածքի 31.4հա գտնվում է անտառային հողերում և հանքավայրի շահագործումն անտառային հողերում անտառային կոմիտեն համարում է ոչ նպատակահարմար: Համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ստացված կարծիքի՝ 568.9175հա մակերեսով հայցվող տարածքը համադրվում է Մեղրաձոր գյուղի շուրջ 4 տասնյակ հողամասերի/քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և բնակավայրերի նպատակային նշանակության, համայնքային սեփականություն հանդիսացող ու արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող անտառային ֆոնդի/ հետ:

2022թ. մայիսի 24-ին, ժամը 15:00-ին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրային քննարկում Կոտայքի մարզի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, որին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը: Հանրային քննարկման ընթացքում հողամասի սեփականատերերից մեկը/որին պատկանում է տարածքի 40հա-ը/ դեմ է արտահայտվել իր հողատարածքում արդյունահանման աշխատանքների իրականացմանը:

ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ առկա են եղել բազմաթիվ դիտողություններ և առաջարկություններ, որոնք 2022թ. ապրիլի 14-ին №4/26.7/5741 գրությամբ՝ ՏԿԵ նախարարության միջոցով ներկայացվել է «Մեղրաձոր Գոլդ» ՍՊ ընկերությանը:


Դիտողությունները մասնավորապես վերաբերել են գործունեության ենթակա և հարակից տարածքների նկարագրին, մակերեսին, մասնավորապես.

- հաշվետվությունում թերի է ներկայացվել և մինչև գործընթացի ավարտ լիարժեք չի ներկայացվել տարածքի և հարակից տարածքների Բուսական և Կենդանական աշխարհի, մասնավորապես կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանությանն ուղղված միջոցառումները և հողային ռեսուրսների պահպանության, ընդերքօգտագործման թափոնների վերաբերյալ տեղեկատվությունը: Թերի է ներկայացվել ռեկուլտիվացիոն աշխատանքների և տնտեսական վնասի հաշվարկի ծախսերը, բացակայել են արդյունահանման համալիրի ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվությունը /հարստացուցիչ ֆաբրիկա և պոչամբար/ և այլն:

Սակայն մինչև փորձաքննական գործընթացի հիմնական փուլի ավարտն ընկերության կողմից դիտողություններով և առաջարկություններով լրամշակված հաշվետվությունը՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից չի ներկայացվել շրջակա միջավայրի նախարարություն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հունիսի 21-ի թիվ 2018-Ա հրամանի համաձայն՝ մերժվել է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման վերաբերյալ «ՄԵՂՐԱԶՈՐ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 02/12 դիմումը՝ ՏԿԵ նախարարության 2022 թվականի ապրիլի 19-ի թիվ ՀՀ/26.1/9358-2022 գրությամբ նշված թերությունները 10-օրյա ժամկետում չվերացնելու հիմքով:

Փորձաքննական գործընթացի լիարժեքությունն ապահովելու նպատակով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 2022 թվականի հունիսի 3-ի №1/26.7/8904





## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

## Հովիկ Մեսրոպյան

